# ԹԱԳՎԻՄԻ ՎԱԳԱՅԻ
# ԼՐՈՅ ԳԻՐ

ԱՌԱՋԻՆ ԱՄ ՏՊԱԳՐՈՒԹԵԱՆ ՀԱՅԵՐԷՆ ԹԱՐԳՄԱՆՈՒԹԵԱՆ

Ի Թըվէն տաճկաց ١٢٤٧, ի շապանի ٢٢ ։ Նումերօ ١٢

ԵՒ ՅԱՄԻ ՏԵԱՌՆ 1832, Ի ՅՈՒՆՎԱՐԻ 13

Ի ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՕԼԻՍ․

## ՕՒՄՕՒՐԻ ՏԱԽԼԻՅԷ
### ԳՈՐԾՔ ՆԵՐՔԻՆ

Ամենողորմած և Մեծազօր Տէր զօրակալ ԱՐՔԱՅՆ մեր, որ ընդ երկայն աւուրս կացցէ, այս շապան ամսոյ տասն և մէկին երեքշաբթի օրն ծոմ ըլլալով, յատուկ այս բարի դիտաւորութըը որ աղքատաց ողորմութի շնորհէ, իր սեպհական ծառաներուն հետ Թեպտիլ կերպարանքով ելաւ Չըրաղան ըսված Արքունական եալըյէն և մայրաքաղաքը գնաց, և մեծ շուկային խալփախճիներուն մէջը քիչմը նստաւ, և ողորմութիւն բաշխելով աղքատները ուրախացուց։

Անկէց հոյակապ ճամիին մէջը, որ կըսվի Ճամիի շէրիֆ Սուլթան պայազիտ Խան Վէլի, հոն ժողովրդոց հետ իքինտի նամազին կատարեց. և յետոյ ելաւ Միւրէքքէպճոց դրան մէկ կողմը խանութիմը մէջ նստաւ յոգնութի առաւ, և եկող անցնող աղքատաց ողորմութի շնորհեց։

Անկէց քալելով մինչև Սիւմպիւլլի խանին քովը եկաւ, և ամէն տեսած աղքատները իր առատ ուլըքովը ուրախացուց. և ապա Արքայական ձիովը ծովեզերքը իջաւ, և պատրաստի եղած Արքունի նաւովը Թագաւորական ծովեզերեայ ապարանքը դարձաւ։

Այն յիշեալ օրը վսեմափառ Սէրասքէր Փաշայն ևս ծոմ ըլլալով Արքունական հրամանով շուկայէն մինչև ծովեզերքը՝ ԻՆՔՆԱԿԱԼԻՆ ձիուն էօզէնկին բռնելով քովը գտնըվէր է. և Բարեբաստ ԻՆՔՆԱԿԱԼԻՆ կրկին հրամանովը՝ իր առատ սէրը ցոյց տալով Սէրասքէրի դուռը դարձեր է։

Նաև իփթարէն յետոյ հոյակապ ճամիին շէյխերէն նէօպէթճի գըտվող շէյխ Հասան էֆէնտին ԱՐՔԱՅԻՆ առջևը քարոզութի և յիշատակութի ըրաւ. և ՏԷՐՆ մեր այս կերպով այն պատվական օթեվանը յարգեց, և Պէրաթի շէրիֆի գիշերը պայծառացոյց։

Որ և Տիեզերական ԻՆՔՆԱԿԱԼԻՆ մերոյ այս յարգելի գիշերը շնորհաւոր և բարենշան ըլլայ, և նորին Արքայական հովանին մինչև յաւիտեան մնասցէ, ամէն։

---

Արքունի սեպհական զօրքերուն Պէկլէրպէկի Ահմէտ փաշայն՝ Վեղիրի այեմին կողմը երթալու վրայ էր. և Սիլիսթրէի վալի Ռուսճուգի մուհաֆըզը զի Մուհամմէտ փաշային հետ աղէկ ծանօթութիւն և բարեկամութիւն ունէր։

Յիշեալ Մուհամմէտ փաշայն իրեն յանձն եղած պարտաւորութիւնը կատարելու աղագաւ, հարկ էր իրեն Թագաւորեալ քաղաքէս ելլալ, և Անատօլուի կողմը անցնիլ, և Արքայական Վեհափառութենէն հրաման խնդրեց։

Եւ հրաման տրուած կերպովը յիշեալ Ահմէտ փաշայն՝ շաբան ամսոյ 16 ին հինգշաբթի օրն մէկ երեւելի խրախճան և զեաֆէթ մը պատրաստեց. Գայմագամ փաշայն, և Սերասքեր փաշայն, և Գափուտան փաշայն, և Սիլիսթրէի վալի յիշեալ Մուհամմէտ փաշայն, և Խօճա փաշայն, և Արքունի սեպհական զօրքերուն Պէկլէրպէկի Մուհամմէտ փաշայն, և մեծի Տէրութեան գլխաւորներէն Նաշիտ աղէկը, Չըրաղան կոչեալ Արքունի եալըյին քովը ունեցած բնակարանը հրաւիրեց, և յիշեալ մեծամեծ նախարարներն ալ ընդունելով գնացին։

Եւ որովհետև այս բնակարանը Արքայական ծովեզերեայ ապարանքին կից էր, բոլոր աշխարհի Բարերար և Խնամածու ԻՆՔՆԱԿԱԼՆ մեր, որոյ կեանքն և իշխանութիւն տևեսցէ մինչև 'ի կատարած, իր Արքունի զօրաց կըրթութիւնը և իր հաւատարիմ ծառաները շատ սիրելուն աղագաւ, կամեցաւ անոնք Արքայական տեսութեամբը ուրախացընել։

Եւ նոյն ծովեզերեայ ապարանքին Գարաղուլ խանէէն իր հետը առնելով երկու ներքին մերձաւոր Արքունական ծառայ և երկու Գարաղուլի զապիթ, գիշերը ժամը երկու և կէսին յիշեալ փաշային բնակարանը գնաց։

Եւ յիշեալ ծառաներուն իր Արքայական Վեհափառութիւնը երկիր խոնարհիլ հրաման տալ արժանի տեսաւ. և հոն երկու ժամի չափ ժամանակ կենալէն յետոյ, ծովեզերեայ Արքունի ապարանքը դարձաւ։

Եւ յիշեալ նախարարքն մինչև ցայս օր իրենց պարգևեալ Արքայական բարերարութիւններէն 'ի զատ, այս կերպով ևս այժմ իրենց պատահեալ շնորհաց և յարգութեան Բարեփառ ԻՆՔՆԱԿԱԼԻՆ փոխարէնը, ամբաւ շնորհակալութիւն և գոհացողական բարեբանութիւն ընելով, աղօթք և օրհնութիւն մատուցին վասն կենացը երկարութեան և մշտնջենաւոր Տէրութեանը Մեծազօր ԻՆՔՆԱԿԱԼԻՆ, և ամէն մէկն փառաւորեցան և գեր քան զչափն ուրախացան։

---

Ինչ և իցէ եթէ Արքունական վագըֆի գանձարաններն, և եթէ վագըֆներու եկամուտներէն ըլլալով նորէն շինելու և թամիր ընելու խայրաթները, ինչպէս երկրորդ անգամ ալեալ Լրագրին մէջը գրուած է, Մեծազօր և Ամենողորմած ԻՆՔՆԱԿԱԼԻՆ բարի կամեցողութիւնը յայտնի կըլլէն. ասկէց յառաջ նորէն շինուածներէն 'ի զատ, այս անգամ՝ ինչպէս այս բարենշան տարվանս մէջ՝ րէպիւլ էվէլի ամսոյն սկզբէն մինչև շաբան ամսոյ սկիզբը Արքունի վագըֆներուն նազըր մեծաւորու Թահիր էֆէնտիին գիտութեամբը շինուած և լրացած վայելուչ ձամի և աղբիւր և այլ բազում խայրաթներուն որքանութիւն 'ի ներքոյ յայտնի կըլլայ։

1 Եյուպ քաղաքի Նագգաշ ըսուած գեղին մէջը եղեալ Պապա Նագգաշի ձամին, և Ֆաթմա խաթունի մէսճիտը,

և Տէֆթէրտար տէրվիշ էֆէնտիին մէտրէսէն, և Պապա Մուստաֆայէն մէքթէպը՝ Թամիր եղան և նորոգուեցան։

2 Այն յիշեալ քաղաքին մէջը եղեալ վայելուչ մէքթէպն որ շինած էր Միհրշահ Սուլթան՝ մայրն մեծի ԱՇԽԱՐՀԱԿԱԼԻՆ, որ կոչուի Ճէննէթմէքեան Սուլթան Սէլիմ Խան, Էվգաֆի Հիւմայիւնէն նորոգուեցաւ։

3 Մայրաքաղաքիս մէջ Էսկի Ալի փաշայի մօտը Խըրգայի Շէրիֆին դէզէյիկ գմէթը, և անոր երկու կողմը սարանց և կանանց յատկացեալ բարձրաշէն մէյձանները, Էվգաֆի Հիւմայիւնի գանձարանէն բազում դրամով ծախսիւ նորէն շինուեցան. և Շէյխ էֆէնտիներուն սեպհական եղեալ ներս և դուրս ունեցող բնակարանները նորոգուեցան և բարեկարգեցան։

4 Զաթլատը խաւուսին ներսը քիչիւկ Այա Սօֆեայ կոչուած Ճամին Շէրիֆը Թամիր եղաւ, և ջրի ճամբաները նորոգուեցաւ։

5 Բարեփառ ԱՇԽԱՐՀԱԿԱԼԻՆ՝ որ կոչուի Ճէննէթմէքեան Սուլթան Սուլէյման Խան, նորին Թագաւորուհի դստեր Միհրմահ Սուլթանի վախֆէն Իւսկիւտար մեծ իսկէլէին քովը Ճամիին դիմացը եղեալ մեծ մէքթէպը՝ ներսով և դրսով կատարելապէս Թամիր եղաւ։

6 Մեծ և յաղթող ԻՆՔՆԱԿԱԼԻՆ՝ որ կոչուի Ճէննէթմէքեան Էպիւլֆէթիհ Սուլթան Մուհամմէտ Խան, նորին հոյակապ Ճամիին շրջապատը եղեալ՝ Պաշ և Այագ և Չիֆթէլէր կոչուած մէտրէսէները՝ վագֆի կողմանէ Թամիր եղաւ։

7 Չըրաղան կոչուած Աբռունի եալըյին քովը Նահէայ էֆէնտիին Ճամին, յիշեալ Միհրշահ Վալիտէ Սուլթանի վախֆին իշխան ըլլալով՝ Մեծագօր ԹԱԳԱՒՈՐԻՆ մերոյ բարձր հրամանովը նորէն շինուածի պէս Թամիր եղաւ, և անոր քովը մէքթէպ և ատիկը ժամացուցի տուն և Թէքէն նորէն շինուելով Նահէայ էֆէնտիին Թալը էհէա եղաւ և վայելչացաւ։

8 Նաև վերոյիշեալ վախֆին իշխան ըլլալով՝ մայրաքաղաքիս մէջը Խալըճըլար ըսուած քէօշկին կողմը՝ մեծի Տէրութեան Շէյխիւլիսլամներէն Մէվլանա Շէմսէտտին Փէնարիին Թոռը՝ Պուրսայի դատաւոր Ալայէտտին էֆէնտիէն հաստատած՝ եկեղեցիէ փոխուած Ճամին Շէրիֆը, շատ ժամանակէ 'ի վեր փլփըլած և դոցուած ըլլալով, այս անգամ Արքայական բարեհաճութեամբ բազում դրամով նորոգուեցաւ, և անոր քովը նորէն մէքթէպ շինուելով վայելչացաւ։

9 Պալաթա Արապ Ճամին կողմը եղեալ Էմէկ Եէմէզ Հիւսամէտտինի վայելուչ մէսճիտը՝ անկեց յառաջ կրակէն այրելով, և իր վախֆը բաւականութիւն չունենալով, վախֆի Հիւմայիւնի իշխան ըլլալով նորէն շինուեցաւ։

10 Յիշեալ Միհրշահ Վալիտէ Սուլթանի վախֆին իշխան եղեալ, Խօճախասան Փէյրուզ աղայի մահալլէին մէջը՝ Միրաքէճի Մուստաֆայ աղայի շինած Ճամին՝ անկեց յառաջ կրակէն այրած ըլլալով, նորէն շինուեցաւ։

11 Պախճա խափուի ներսը եղեալ վայելուչ մէտրէսէն և գեղեցիկ դասատունը՝ շինեալ 'ի Բարեյիշատակ ԻՆՔՆԱԿԱԼԷՆ՝ որ կոչի Ճէննէթմէքեան Սուլթան Ապտիւլհամիտ Խան, այժմ Թամիր եղան և նորոգուեցան։

12 Նաև Պաղխասարէ աղասը՝ Իտիրնեցի Մուհամմէտ աղայի վախֆէն՝ Իւսկիւտարու մօտ Մալթէփէ գիւղին քովը եղեալ աղբիւրին՝ շատ ժամանակ անցնելով ջրի ճանապարհները աւրուած, և ջուրը բոլորովին կըտրած ըլլալով, նորէն քիւնկէր շարելով Թամիր եղաւ։

13 Իւսկիւտար Պաշը ակօյիւք ըսուած գեղը եղեալ՝ ջրի ճամբաները աւրուած և աղբիւրին ջուրը կտրած էր. անոր վախֆը մէկ կողմէ հետ կապեալ չըլլալուն համար, յիշեալ խազինէէն

Թամիր եղաւ և վայելչացաւ։

14 Պալաթա Պէկօղլուի կողմը ջուխուր ըսված տեղը՝ Հըրնավուլա և Ագուրաւլա մահալլէներուն բնակիչները՝ ջրի համար նեղութի քաշելնին՝ Ամենողորմած ԱՐՔԱՅՆ լսելով, նորին Արքայական բարձր հրամանովը երկու հատ աղբիւր նորէն շինվեցաւ։

15 Պէկլեան Սուլթանի վախֆէն մայրաքաղաքին մէջը՝ Գավալը Փուրուն ըսված տեղը եղեալ, ասկէց յառաջ կրակէն այրած Սէրվիլի մզկիթը, և անոր խամամին մէշրութէ տունը՝ նորէն շինվեցան։

16 Թագաւորեալ քաղաքին մէջը՝ Տէմիր խափուի կողմն եղեալ Ահմէտ Փաշայի ճամին ևս կրակէն այրելով, անալ նորէն շինվեցաւ և վայելչացաւ։

17 Էվգաֆի Հիւմայիւնի իլհաք եղածներէն Օսման աղայի Ղաշի գեղը շինած ճամին՝ Թամիր եղաւ։

18 Բարեփառ Սուլթան Սուլէյման Խան ԻՆՔՆԱԿԱԼԻՆ հոյակապ Ճամիին շրջապատը եղեալ՝ գիտուն մէտրէսէներէն երրորդ և չորրորդ անուանեալ մէտրէսէները Թամիր եղան, և Խաթիպին մէշրութէ եղած տունը նորէն շինվեցաւ։

19 Էպիւլֆէթիհ Սուլթան Մուհամմէտ Խան ԻՆՔՆԱԿԱԼԻՆ՝ Սէրասքէրի դրանը մօտ Մէրճան չարշըսը ըսված շուկային կողմը եղեալ պատուական աղբիւրը նորոգվեցաւ։

20 Պապիւսսաատէթ աղասը Ղազանֆէր աղայի՝ Էյուպ Գընճի չէլէպիին մահալլէն եղեալ ճամիին Արքայական նստելու տեղ շինվեցաւ, և նոյն ճամին Թամիր եղաւ և վայելչացաւ։

21 Խըրգայի Շէրիֆի կողմը եղեալ Մէսիհ Ալի Փաշայի գեղեցիկ ճամիին ջրի ճամբաները՝ քառասուն տարիէն աւելի աւերված, և ջուրը բոլորովին կտրված և հատած ըլլալը՝ Ամենողորմած ԱՐՔԱՅՆ լսեց, և Պէկլեան Սուլթանի վախֆէն նորէն քիւնկեր շալվէլով՝ ջուրը վազեց։

22 Մայրաքաղաքին մէջը Խօճայ փաշայի թաղին մօտ՝ Մարզըվանցի Խարայ Մուսթաֆայ Փաշայի մզկիթն ևս նորէն շինվեցաւ. և այս անգամ Մէնպէր դրըվելով, հինգ ժամանակի աղօթքը կատարելով վայելչացաւ։

23 Մայրաքաղաքին մէջը Թավուգպազարիին մօտ՝ նախկին Պապիւսսաատէ աղասի Հիւսէին աղային նորէն սկսած ճամիին շինութիւնն՝ այս օրերս կը լըմըննայ։

24 Թագաւորեալ քաղաքը Խումխափուին ներսը՝ քառասուն երկու թվականի կրակէն այրած՝ Նշանճի Մուհամմէտ Փաշայի ճամին.

25 Նաև նոյն կրակէն այրած Մախասճիներուն մէջը եղեալ՝ խօճայ Փիրիին ճամին և մէքթէպը.

26 Այլև Թօփխանայի գիւղաքաղաքը Ճիհանկիրու ճամիին կողմը՝ Ագարճա ըսված տեղը՝ կրակէն այրած Իլեաս չէլէպիին մզկիթը.

27 Եւ դարձեալ՝ նոյն գիւղաքաղաքին մէջը խըշլաներուն վերի կողմն եղեալ՝ ասկէց յառաջ կրակէն այրած՝ քէթէնճի Էօմէր Փաշային ճամին.

Ասոնց եկամուտները և վախըֆները քիչ ըլլալով, մանաւանդ Իլեաս չէլէպիին վախֆը եկամուտ չունենալով, բարեհաճութ Ամենողորմած ԻՆՔՆԱԿԱԼԻՆ Էվգաֆի Հիւմայիւնի գանձարանէն նորոգվեցան և վայելչացան. որոնց մէջը անցեալ Միրաճի գիշերն պարտք եղած աղօթքը և ԹԱԳԱՒՈՐԻՆ օրհնութիւը կատարեցաւ։

Եւ այս չորս ճամիին Իմամներուն և Խաթիպներուն և ուրիշ սպասաւորներուն՝ յառաջուց կարգեալ հասոյթներնին՝ հիմակվան ծախքերուն նայելով բաւական չէին. և վախըֆներուն եկամուտներուն վերադիր ընել կարելի չըլլալուն համար, Բարեփառ ԻՆՔՆԱԿԱԼԻՆ մշտնջենաւոր յիշատակը ըլլալով յիշեալ ճամիներուն նորէն մէկ քա-

նի ապստամբ աւելցընելու, և ժամանակին ծախքին նայելով՝ անոնց հասոյթը կարգելու, և հին ապստամբաց հասոյթներուն ևս ըստ արժանոյն վերադիր ընելու, Ամենողորմած ԻՆՔՆԱԿԱԼՆ հրաման ընելուն պատճառ, ասոնց ամէնը տեղնիտեղը կարգադրեցաւ, և յայտարարուէ տեփթերը Եվգաֆի Հիւմայիւնի նազըր մեծապատիւ Էֆէնտիին կողմանէ ԹԱԳԱՒՈՐԻՆ տրուեցաւ. և ինչպէս Հզօր ԻՆՔՆԱԿԱԼԷՆ հրովարտակով հրաման եկաւ, այն կերպովը կատարեցաւ:

Եւ ասոնց վախճանից նազարէթն՝ Եվգաֆի Հիւմայիւնի նազարէթին հետ հաղորդ և խնհամ ըլլալու շահն, այս նոր շինած և Թամիր եղածներէն յայտնի կըլլայ:

Բարեխնամ ԻՆՔՆԱԿԱԼԻՆ աշխատասէր ծառայներէն ըլլալով, ասկէց յառաջ մեռանօղ Արքունի զինակիր Ալի աղային չորս հատ որբ զաւակներ մնացեր. և այն որբերը ամէն կերպիւ առատ գթութէ և ողորմութէ ԱՇԽԱՐՀԱԿԱԼԻՆ արժանի եղան:

Օրինակի պատճառ յայտնի է որ, բարեգութ ԻՆՔՆԱԿԱԼԻՆ հովանաւորութեն՝ և յատկապէս նորին Արքայական Վեհափառութեր առատաձիր ձեռացը պարգեւներէն շինած և ըստացած՝ մայրաքաղաքին նահանգին մէջ՝ Պընտըխը ըսված տեղը եղած եալըն՝ և էշյան և կարասին՝ անոր զաւակներուն և ընտանիքին պարգեւած էր. և անոնքալ մինչև հիմա Արքայական ընդարձակ հովանաւորութեր տակը՝ ամէն կերպիւ հանգիստ ապրելով՝ Բարերար ԻՆՔՆԱԿԱԼԻՆ համար աղօթք կընէին:

Բայց այժմ այս բարերարութեններէն ի զատ՝ անոնց հանգստութեր ամէնևին կատարեալ ըլլալու պատճառ, իր Արքայական Տիեզերատարած և Ամենագութ ողորմութեն՝ յիշեալ որբերուն ամէն մէկին 12500 ղրշ՝ որոյ գումարն է 50 հազար ղրշ փայխով սեհիմ բարձր հրամանով շնորհեց:

Նոյնպէս ասկէց յառաջ մեռանօղ Խատգատներուն կարգէն երեւելին՝ և յատուկ աղօթարար ԻՆՔՆԱԿԱԼԻՆ՝ Վէքէլճի զադէ Մուսաֆի Էֆէնտին, ասոր երկու հատ որբերուն ամէն մէկին ալ 1865 ղրշ փայխով սեհիմ գայիմէներ պարգեւել առատ գթութը արժանի համարելով, Օրպխանեայի ամիրեէն կարգաւորել պէրաթներնին տրուեցաւ:

Իչէլի գաւառին Միւսէլլիմութը՝ Ճէպպար զատէ գափու քեհեասի՝ Հաճի Մուստաֆայ պէկի որդի, Խափուճի պաշի՝ և Րիքեապի Հիւմայիւնի հրամանատար Սաըրդ պէկին.

Եւ Թերսուս գաւառին Միւսէլլիմութը՝ նախկին Կիրիտ Տեֆթերտարի՝ Խօճակեանի Տիվանի Հիւմայիւնէն Բաղիպ էֆէնտիին, այս քառասունըեօթը տարվան մարտի սկիզբէն զաւթ ընելու համար յանձնըված է:

Այս շաբան ամսոյ տասնեհինգերորդ հինգշաբթի գիշերը՝ տասներորդ ժամու ատենները՝ պօղազ իչին Պէպէք ըսված տեղը՝ յանկարծ հրդեհ պատահեցաւ, Փէքսիմէտ խանէն և քովի եալըն այրեց, և քակելու հարկաւոր եղած տեղերը քակելով՝ Այ ողորմութեր կրակը մարեցաւ:

## ՓՈՒՆՈՒՆ

### ԾԱՆՕԹՈՒԹԻՒՆ

Յայտնի և հաստատուն իսկ է որ՝ մարդկային աստիճանը երկու կարգ կը բաժնըվի՝ յատուկ և հասարակ:

Հասարակ աստիճանին մէջը եղօղներուն մէկ դասը՝ խաղաղ բնութէ ակր, և կամ ամէն իրաւունքի և կանոնի խելահաս ըլլալով՝ կեանքը և մահը մտածէ

լով, համեստութեան և պարկեշտութեան ունենալու՝ առլոուր և վստահ ըլլալու կը հետևին. և իրենց կարողութը և հնարաւոր եղածին չափ՝ կեանքերնին ապահով և հանգիստ և խաղաղ կանցունեն։

Ու մէկ դասն ալ՝ գէշ բնութեան տէր՝ և ագխութ խաւարի մէջ ըլլալով՝ չար անզգամ անհանդարտ՝ և կռւոնք և գինք և արհեստ չըգիտնալէն 'ի պատ՝ փոքր և ոչինչ պատճառանօք մը իր անզգամութը յայտնի կընէ, և իր հաւատքը և կեանքը կաւրէ։

Ու շատ անգամ ասանկներուն չար գործքերը ոչ միայն իրենց կը վնասէ, հապա ուրիշին ալ կը դըպչի։ Աւստի ամէն ժամանակ այս դասէն եղողներուն զըսպիլը և բարեկարգիլը և ուղղիլը՝ արգելքով պատուիրանքով և խրատով կըլլայ. և վնասը և չարութիւններուն վերնալը՝ բռնութեամբ և արմատով ըլլալուն համար. պէտք է որ՝ միշտ վախը և երկիւղը և կրթութը ասոնց վրայէն չըվերնայ. որպէս զի աշխարհի բարեկարգութեան աւերում, և ժողովրդոց հանգըստութեան խանգարում չըլլայ։

Ու ասանկով այս կերպ մարդիկները մինչև որ իշխանութ հրամանին և պատվիրանքին հնազանդ ըլլան, արժան չէ իրենց կամացը և յօժարութը թողուլ։

Ու ժամանակ ժամանակ խրատ և պատուէր և յանդիմանութ ընելով ուղղութի բերելու ջանալը՝ ծնողին և ընտանիքն օրինօք հարկաւոր է, և ընդհանրական խրատներուն շատ օգտակար ըլլալը փորձըված է։

Մանաւանդ ամէն ժամանակի մէջ վճիռ և ընդհանրական պատուէր հրատարակելը՝ իմաստուն և օրէնսգէտ Իշխաններուն իրենց յատուկ պարտքերնին ըլլալուն համար, այս անգամ միայն թէ ճշմարտութը յայտնելու, և ժողովուրդը ուղղելու բարի դիտաւորութ, օրէնքներէն մէկ քանին մարդկան ծանուցանող՝ Լրաբերցոց լեզվով մէկ պատմական գիրք մը շարադրեցաւ, և տաճկերէնի թարգմանվեցաւ. և հասարակաց շահուն համար տպվելու և տարածվելու մտօք՝ Վեհափառ և Տիեզերակալ ԱՐՔԱՅԷՆ աղաչանքով հրաման խնդրվեցաւ։

Ու յիշեալ գիրքն ալ՝ յայտարարութեանը հետ մէկտեղ՝ Գերիվերյ ԻՆՔՆԱԿԱԼՆ մանրամասն քննելով մի ըստ միոջէ տեսաւ. և տպվելու և ցրվելու եղած աղաչանքին՝ Արքայական ամենագութ կամօքն բարեհաճեցաւ. և Ճէյխիւլամ էֆէնտիէն գըրված և գըրված գովութ և ստորագրութը հետ Արքունի տպարանին մէջը տպվելու՝ հրամանատարներուն պատվէր և յանձնարարութիւն եղաւ։

## ՈՒՍՈՒԵՐԻ ԽԱՆԵՐԻՃԻՑԸ
### ԳՈՐԾՔ ԱՐՏԱՔԻՆ

Յունէմէնկու. արտաքին գործարէալ ժողովին մէջը՝ տէղ'ի էրէրէն գլխաւորներուն. բռած առէնախօսութէն թարգմանութին է։

Ով վերակացուք և գլխաւորք ազգիս. Պէլճիգայու երկիրը Յոլէնտէնկու երկրէն բաժնըվելու և զատվելու պատճառովը՝ պատահած կռիւները վերջացընելու յուսով եղած խօսքերուն և վիճաբանութիւններուն կերպին նայելով, այս խօսակցութիւնները՝ մեր Տէրութեան օգտակար՝ և օրինացը և ազատութեը յարմար և համեստ կերպով շուտով լմըննալը չըհաւատալով՝ անկեց յառաջ գումարեալ ազգային ժողովին մէջը՝ մեր կողմանէ խնացում ըրված և յայտնըված էր։

Այս կարծիքը հաստատուն ունենալուս աղագաւ, մեր ձեռքին տակը դըտնըվող և մեզի հպատակ եղողները հարկապահանջութեան բեռի տակը խօթել, յիրաւի մեծ տրտմութ կըպատճառէ ինծի. սակայն երկիրս բնակիչները և ազգս՝ հայրենեաց սէրը և արտօնութիւնը պահպանելու համար՝ մինչև հիմա անձամբ և ապրանքով ծառայութ և օգ-

նութիւն ընելովին յայտնի ցոյց տըվին, որ աշխատութիւն և կատարեալ ջանք ընելէն ասկեց ետեւ ալ ձանձրանալու չեն : Բնական եղած հայրենեաց սիրուն և ջանացողութեան պարտքը կատարելու համար՝ մինչև այս առաջիկայ գործոյս աւարտումը ամէն կարողութը և ուժով պիտի հետևին . և մեր հայրերուն և նախնիքներուն ջանացողութե Ճամբային հետևելով՝ յիրաւի անոնց պարծանքի պատճառ պիտի ըլլան :

Ահա այս երկիրը երևելի և պայծառ ընող իմ նախնիս առաջին Կիլումը, որ անոր Ճամբային սրտի մօք հետևել ըլլայ՝ Երկնաւորին օղորմութիւնը կը յուսամ, որ շահաւէտ անուշ հովը մեղի կը փչէ առանց կարծեաց :

Աստի ներկայ ժամանակիս հարկաւորութենը պատճառաւ՝ պէտք եղած չափէ դուրս ծախքին օգնելու և բաւական ըլլալու համար՝ մեծ գումար դրամոյ պէտք ըլլալը յայտնի է . այս դրամոյն յարմար և արդար և դիւրին Ճամբայով իւրաքանչիւր մարդու վրայ բաժնելու և ժողվելու կերպը՝ ձեր յարգութեր գիտցունելու մեկ յայտարարութիւնը կրորդի, ձեզի յաւիտենականին խնամոցը կը յանձնեմ.

Այսպէս գրված էր :

Փիլեմենկին և Պէլճըգային մէջը նոր բորբոքած կռուոյն բոցը՝ բոլոր Եւրոպիա չըտարածվելոյն հմր, Լօնտրա Ինկիլիզի մայրաքաղաքը ուրիշ տէրութեանց ընդունելի ըլլալու՝ և հաստատութիւն տալու կարօտ եղած պայմաններուն մէջտեղը դրանըլվելու՝ և հաւասարութի ունենալու աղագաւ, Փիլեմենկի Արքայն ստիպեցաւ՝ որ ժամանակմալ դիմանայ որ իր դիտաւորութեը հանի :

Եւ ամէն մեկ ֆրանքին երեք ղրշ տասը փարայ աժէք ունենալով՝ երեք հարիւր միլեօն ֆրանքի փոխ առնելու և պատրաստելու հետևեցաւ :

Եւ յետ այնորիկ Բուսի և Պրուշի տէրութեանց կամեցողութիւնը ինչ կերպ ըլլալը տեղեկանալու և իմանալու համար՝ Փեօթրօպուրղ և Պէռլին քաղաքներու յատուկ հրամանատար ուղարկելուն համբաւը՝ Փռանկաց մեկ լրոյ գրին մէջը գրված էր :

Այս միջոցս Ինկիլիզի և Փռանկաց ղի տէրութեան մէջը՝ առևտուրի վրայօք նորէն մեկ դաշնադրութիւն ընել երկու տէրութեանց կամեցան : Երկու ազգներ ամէն մեկը միայպէս այս պարտուրէն աւելի օգուտ ստանալու միտքով՝ այս բանիս կը ջանային կատարումն տալ :

Եւ այն կերպով դաշինքդրուէ պայմանները յարմարելու համար, խելացի մարդուն մեկը՝ Ինկիլիզի տէրութիւնը Փռանկըզի որուէ հետ՝ հաշտուի եղած թվկնէն ի 1230 թվէն մինչև հիմա՝ 17 տարվան մէջ, Փրանսայի արդիւնքը և ապրանքը Փրանսայի կողմէն որչափ բան Ինկիլթէրրա մանալով՝ Փրանսըզները օգուտ տեսեր էն : Այնպէս անոր դէմ Ինկիլիզի տէրուէ կողմանէ որչափ ապրանք և արդիւնք եկեր է, և Փրանսայի երկիրը մտեր և ծախվեր է, ասոնց ամէնը այն խելացի մարդը մէ բատմիջէ ծանուցանող տէֆթէր ըրեր է, և փառլամէնթօ ըսված Ինկիլիզներուն ազգային ժողովոյն տըվեր է . ամէն մեկ ֆրանքին երեք ղրշ 10 փրյ Օսմանեան հիսապովն ըլլալով՝ ահաւասիկ թարգմանութեն յայտնի կըլլայ :

| Ինկիլիզի երկրի մէջէն ելածները | | Փռանսայէն Ինկիլիզի երկիրը մտածները |
|---|---|---|
| Ամ թն | Փրանքի | Փրանքի |
| ١٨١٤ | ١٤٥٦٧٥٦٩ | ١٧٧٠٥٦٦٢ |
| ١٨١٥ | ٠٧٤٥٧٢٩٠ | ١٨٨٥٩٣١٤ |
| ١٨١٦ | ١٠١٩٢٥٠٠ | ١٠٤٤٤٥٧١ |
| ١٨١٧ | ٢٥٠٨٧١٤٥ | ١٣١٩٦٦٤١ |
| ١٨١٨ | ٠٩٢٣٧٥٩٢ | ٢٩٠٦٠٥٩٤ |
| ١٨١٩ | ٠٧٤٨٧٣٣٢ | ١٦٠٥٠٢٩٢ |
| ١٨٢٠ | ٠٩٧٦٨٦١٢ | ١٩٣٧٨٣٠٩ |
| ١٨٢١ | ١٠٩٥٦٦٤٨ | ٢١٦٤٠٤١٥ |
| ١٨٢٢ | ١٠٩٢٥٢٢٧ | ٢١٩٥٦٨١٩ |
| ١٨٢٣ | ٠٨٧٤٠٩٠٥ | ٢٧٨٩٥٠٠٩ |
| ١٨٢٤ | ٠٨٤٤٠٩٠٠ | ٣٨٩١٨٣٤٦ |
| ١٨٢٥ | ٠٩٠١٧٧٤٠ | ٤٥٨٩٩٦١٥ |
| ١٨٢٦ | ١٢٢١٠٩٤٠ | ٣١١٨٥٦٥٠ |
| ١٨٢٧ | ١١١٧٤٠٠٠ | ٦٥٦٤٣٦٩٠ |
| ١٨٢٨ | ١١٤٧٣٤٤٠ | ٧٩٤٧٠٦٢٩ |
| ١٨٢٩ | ١٢٢٨٤٧٠٤ | ٥٢١٧٤٨٤٠ |
| ١٨٣٠ | ١١٨٩٧١٠٤ | ٥٨٢١٢٠٩٨ |
| | ١٩٠٩١٩٦٤٨ | ٥٦٧٦٩٢٤٩٤ |

Այս յայտարարական ցուցակէն նայելով Ֆրանսայի թ̅րութ̅ը Ինկիլթերրայի հետ առուտուր և բարեկամութիւն ընելէն, Ինկիլիզներէն աւելի օգուտ և վաստակ ընելը յայտնի կըլլայ ։

---

ԼՐՈՑ ԳԻՐԸ որ օրական դիպուածները կը ծանուցանէ, յՕսմանեան հզօր Տէրութէն կոչեցաւ ԹԱԳՎԻՄԻ ՎԱԳԱՅԻ. որ յայլ լեզուս Գազէթա և կամ այլ ինչ անուանի ։

—

Թագվիմի վագայի խանէի ամիրէ || կոչված Ալէքունի տպագրատանը մէջը՝ Տաճկական լեզուաւ տպագրուած սկսած օրէն Լրոյ գրերը մինչև հիմա ١١ Նումերօ տպվեցաւ. այս անգամին տպվելու Լրոյ գիրը ١٢ Նումերոյն ըլլալուն համար՝ անկեց թարգմանեալ հայերէն Լրոյ գիրնալ ١٢ Նումերոյէն սկիզբն եղաւ ։